



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հունիս 2019թ.

N 78-ձ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 3-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և այն փակ բաժնետիրական ընկերությունների, որոնց հարյուր տոկոս՝ բաժնեմասի տիրապետման իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման և մրցութային հանձնաժողովի ձևավորման և կազմի հաստատման կարգը հաստատելու մասին» հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1. Հրամանի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 18-րդ կետի «90» թիվը փոխարինել «80» թվով.

2. Հավելվածի 17-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Հարցատոմսը բաղկացած է 40 հարցից (թեստավորման առաջադրանքից): Հարցատոմսում թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան: Թեստավորման առաջադրանքները կատարելու համար մասնակիցներին տրվում է 90 րոպե ժամանակ: Թեստավորման փուլը անցկացվում է մրցույթի բոլոր մասնակիցների համար միաժամանակ:»:

3. Հավելված 19-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Մասնակիցների հետ հարցազրույցն անցկացվում է 3 հարցից բաղկացած հարցատոմսերի միջոցով, ինչպես նաև կոնկրետ առաջադրանքի միջոցով աշխատանքային իրավիճակում մասնակցի կարողությունների գնահատման, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Հարցատոմսերը ներառում են սույն կարգի 16-րդ կետով նշված ոլորտներին վերաբերող հարցեր: Հարցազրույցին պատրաստվելու համար մասնակցին տրվում է 10 րոպե ժամանակ:»:

4. Հավելվածը լրացնել նոր՝ 19.1-ին կետով.

«19.1 Կոնկրետ առաջադրանքի միջոցով աշխատանքային իրավիճակում մասնակցի կարողությունների գնահատման համար հանձնաժողովը մասնակցին կարող է հանձնարարել տվյալ պաշտոնի գործառույթներից բխող որևէ առաջադրանք, իսկ մասնակիցը պետք է 10 րոպեի ընթացքում ներկայացնի դրա լուծման իր տարբերակը: Հանձնաժողովը մասնակցին կարող է հանձնարարել նաև ստուգել ինչ-որ փաստաթուղթ: Փաստաթղթերը կարող են լինել՝ ինչպես ճիշտ ձևակերպված, այնպես էլ՝ սխալներով: Ստուգման ընթացքում սխալների հայտնաբերումը կամ բացթողումը կարող է վկայել մասնակցի մասնագիտական կարողությունների մասին:»:

5. Հավելվածի 21-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«21. Հարցազրույցի ընթացքում հիմնական և հարակից հարցերին տրված պատասխանները գնահատվում են հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից՝ գրավոր կերպով:

3 հարցից բաղկացած հարցատոմսերի հարցազրույցի փուլում մասնակցին տրված յուրաքանչյուր հարց գնահատվում է 0-5 միավոր, որը հաղթահարելու համար ստացած միավորների հանրագումարը պետք է կազմի առնվազն հիսուն միավոր, իսկ կոնկրետ առաջադրանքի միջոցով աշխատանքային իրավիճակում մասնակցի կարողությունների գնահատման փուլը հաղթահարելու համար՝ Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:»:

